

# ՄԱՐՄԱՐԱ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

ՀԻՄՆՈՒՄԵ 1940ԻՆ


25.5.2022

ՀԻՄՆԱԳԻՐ ՍՈՒՐԵՆ ՇԱՄԼԵԱՆ

ԳԻՆ 2 ԹԼ.

## ՄՊԱՆԱԿԱՆ ԱՍՍԱԳԻՐ ՄԸ ԸՆԴԱՐՉԱԿ ՀԱՐՑԱԶՐՈՅՑ ՈՒՆԻ ԵՐԳՉՈՒՀԻ ՍԻՊԻԼԻՆ ՀԵՏ

Երգչուհի Սիպիլի անունը այլևս ելած է թուրքիոյ եւ Հայաստանի, հայկական դադուժներու շրջանակներէն դուրս: Սիպիլ կը շարունակէ մեր մայրենիով ծառայել հայ մշակոյթին ու իր գեղեցկաձայն ելոյթներով դրաւել արուեստասէրներու սիրտը: «Ժո՛թ Տաուն» անունով պարբերաթերթը, որ լոյս կը տեսնէ Սպանիոյ եւ Հարաւային Ամերիկայի մէջ, իր վերջին թիւով լայն տեղ յատկացուցած է Սիպիլի հետ կատարուած հարցազրոյցի մը: Հարցազրոյցը վարած է Լարա Վիլլալոն: Խորագիրն ալ հետաքրքրական է. «Յառաջ երթալ առանց մոռնալու եւ դարգանալ»:



Սիպիլ կը պատմէ իր կեանքի ու արուեստի մասին, կը յիշեցնէ որ որպէս պոլսահայ երգչուհի շուրջ 11 տարի է ի վեր կը ջանայ իր կարեւորութեան սահմաններուն մէջ լաւագոյնը ընել մայրենի լեզուով երգելու ներկայացնելու եւ տարածելու ուղղութեամբ:

Երգչուհին երախտապարտ է Գարլոս Զրուցոյին ու Լարա Վիլլալոնի, որոնց առաջարկով կատարուեցաւ այս հարցազրոյցը: